ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույց

2021

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ | ՀԱՍՑԵ. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 24/2

Փաստ. անվանումը	ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
Փաստ. N	ԵՄՀ/ՁԿ-ԿԳ-02-03
Հաստատման ամսաթիվը	10.03.2014
Վերջին վերանայումը	27.05.2021
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող /պաշտոն, անուն ազգանուն/	Աշխատանքային խումբ
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ամբիոնների վարիչներ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոփ. N	Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն
1	27.05.2021	Հիմքում ունենալով ՈԱ կենտրոնի կողմից գործընթացի գնահատման արդյունքները և հանձնաժողովների նախագահների և անդամների կողմից ներկայացված առաջարկությունները վերանայվել է 9.1 կետը. մասնավորապես՝ գրախոսի գնահատմանը տրվել է 20% կշիռ ընդհանուր գնահատման մեջ /նախկին 30%-ի փոխարեն/:	Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. Օհանյան ՈԱ կենտրոնի ղեկավար՝ Մ. Ջիլավյան
2	27.05.2021	Ուղեցույցը խմբագրվել է ԿԳՄՍ նախարարի 30 մարտի 2021 թ. N 27-Ն որոշման հիման վրա, մասնավորապես կարգի 8.6 կետում՝ «գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող» բառերից հետո ավելացվել է «հաստիքային» բառը, նույն դրույթում «երեք» բառը փոխարինվել է «երկու» բառով:	Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. Օհանյան ՈԱ կենտրոնի ղեկավար՝ Մ. Ջիլավյան
3	27.05.2020	Ուղեցույցում ավելացել են ավարտական աշխատանքների/ մագիստրոսական թեզերի առցանց ներկայացման և պաշտպանության ընթացակարգը (բաժին 10):	Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. Օհանյան ՈԱ կենտրոնի ղեկավար՝ Մ. Ջիլավյան

4	28.11.2019	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության մեթոդական ցուցումները վերամիավորվել և ամբողջությամբ վերանայվել են բուհի Հետազոտական ինկուբատորի կողմից՝ համապատասխանեցվելով ՀՀ ՈԱԾ-ին և բուհի ներքին որակի ապահովման մեխանիզմներին: Փաստաթուղթը վերանվանվել է որպես՝ «Բակալավրի հետազոտական աշխատանքի և մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշպանության ուղեցույց»-ի:	Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. Օհանյան ՈԱ կենտրոնի ղեկավար՝ Մ. Ջիլավյան
5	30.08.2017	Մեթոդական ցուցումները վերանայվել են որոշակի վերանայումների:	Գիտական խորհրդի նախագահ՝ Ս. Օհանյան ՈԱ կենտրոնի ղեկավար՝ Մ. Ջիլավյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ 8
2. Ընդհանուր պահանջներ 8
3. Հետազոտական աշխատանքի/ նախագծի թեմայի ընտրությունը 9
4. Հետազոտական աշխատանքի բովանդակությունը եվ կառուցվածքը 10
5. Հղումների ներկայացումը 10
6. Հետազոտական աշխատանքի ձեվավորումը 10
7. Հետազոտական աշխատանքի ներկայացման ընթացակարգը 11
8. Հետազոտական աշխատանքի պաշտպանությունը 11
9. Գնահատումը 13
10. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց ներկայացման և պաշտպանության ընթացակարգ 14
Բակալավրիատի ավարտական աշխատանքի կառուցվածք (Ձևաչափ 1) 14
Մագիստրոսական ավարտական աշխատանքի կառուցվածք (Ձևաչափ 2) 17
Գրախոսողի կողմից բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման ռուբրիկ (Ձևաչափ 3)21
Գրախոսողի կողմից մագիստրոսական թեզի գնահատման ռուբրիկ (Ձևաչափ 4) 23
Գիտական ղեկավարի կողմից ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ձԵՎաչափ (Ձևաչափ 5) 25
Հետազոտական ինկուբատորի ղեկավարի կողմից ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ձևաչափ (Ձևաչափ 6) 26
Հանձնաժողովի անդամների կողմից բակալավրի ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ռուբրիկ (Ձևաչափ 7) 27
Հանձնաժողովի կողմից վերջնական գնահատականի ԱՄՓՈՓԱԹԵՐԹ (Ձևաչափ 8) 28

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Մեթոդական ցուցումներում շարադրված են Բակալավրի հետազոտական աշխատանքի և մագիստրատուրայի թեզին ներկայացվող բովանդակային, տեխնիկական և կառուցվածքային պահանջներ:

1.2. Մեթոդական ցուցումներում ներկայացված են նաև հետազոտական աշխատանքի շարադրման վավերապայմանները և ձևավորման պահանջները, աշխատանքը պաշտպանության ներկայացնելու և դրա գնահատման ընթացակարգերը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2.1. Հետազոտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:

2.2. Կրթական ծրագրի ավարտին բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողը պետք է ապահովի ստորև ներկայացվող վերջնարդյունքների որոշակի մակարդակ, որի դեպքում միայն կարող է հաջողությամբ ավարտել ծրագիրը:

Վերջնարդյունքի բնութագրիչ՝ ըստ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի		
	Բակալավրիատ	Մագիստրատուրա
Գիտելիք	1. Հետազոտության թեմայի վերաբերյալ **հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն**	1. Հետազոտության թեմայի վերաբերյալ **խորը մասնագիտացված գիտելիքներ**, այդ թվում՝ տվյալ ոլորտի **վերջին ձեռքբերումների վերաբերյալ** 2. Հետազոտության թեմայի վերաբերյալ **միջմասնագիտական ոլորտների տեսությունների** իմացություն
Հմտություն և կարողունակություն	2. **Տվյալ թեմային** առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները **ներկայացնելու և բացատրելու հմտություններ** 3. **Տվյալ թեմային** առնչվող առնչվող **քանակական և որակական** տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ 4. Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ	3. **Տարբեր ոլորտների** գիտելիքը **համակցելու** և **նոր գիտելիք** ստեղծելու հմտություններ՝ նոր և անծանոթ իրադրություններում տեսական ու գործնական խնդիրներ լուծելու համար 4. Եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները **հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու հմտություններ** 5. Հմտություններ, որոնք անհրաժեշտ են **մասնագիտական և (կամ)**

		միջմասնագիտական ոլորտներին առնչվող **քանակական ու որակական** տվյալները խորը վերլուծելու և գնահատելու համար՝ որոշումներ կայացնելու նպատակով 6. Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները **հետազոտելու**, արդիական գաղափարներ ու մոտեցումներ **առաջադրելու**, ինչպես նաև ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված **նորարարական ու ստեղծագործալուծումներ առաջարկելու** համար

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Հետազոտական աշխատանքի թեմաները ներկայացնում է համապատասխան մասնագիտական ամբիոնը՝ նախապես քննարկելով դասախոսների, գործատուների և ավարտական կուրսի ուսանողների հետ, հաշվի առնելով նախորդ տարվա պաշտպանության ընթացքում հանձնաժողովի կողմից ստացված նկատառումները:

3.2. Բակալավրի ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը հաստատվում են ավարտական ուստարվա առաջին կիսամյակում, իսկ մագիստրոսական թեզինը՝ մինչև առաջին կուրսի առաջին կիսամյակի ավարտը:

3.3. Թեմաների ընդհանուր ցուցակը ներկայացվում է Եվրասիա միջազգային համալսարանի Հետազոտական Ինկուբատոր և դրական կարծիքի դեպքում կենտրոնի կողմից թեմաները ներկայացվում են Գիտական Խորհրդի հաստատմանը:



3.4. Ամբիոնների և Հետազոտական Ինկուբատորի միջև տարաձայնությունները կարող են քննարկվել Գիտական Խորհրդում:

3.5. Միևնույն թեմայի ընտրությունը տարբեր ուսանողների կողմից արգելվում է: Թեմաների ընտրությունը կատարվում է առցանց՝ նույն թեման երկրորդ անգամ ընտրելու հնարավորության բացառմամբ:

3.6. Թեման ստանալուց հետո ուսանողը մեկ շաբաթվա ընթացքում կարող է դիմել ամբիոնի վարիչին՝ թեման փոխելու խնդրանքով, որը կարող է բավարարվել կամ մերժվել:

3.7. Կառավարման ամբիոնի որոշ մասնագիտացումների դեպքում (ըստ ամբիոնի նիստի արձանագրության և որոշման) մագիստրատուրայի ուսանողը պետք է կազմի բիզնես պլան կամ նախագիծ: Այս դեպքում դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել հաջորդ բաժնում ներկայացված համապատասխան ձևաչափով:

4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1. Կառուցվածքային առումով հետազոտական աշխատանքը պետք է ձևավորված լինի համապատասխան ձևաչափում ներկայացված պահանջներով՝ առանց փոփոխության: Ստորև ներկայացված ձևաչափերը հանդիսանում են սույն ուղեցույցի մաս:

Բակալավրի ավարտական աշխատանքի ձևաչափ	Ձևաչափ 1
Մագիստրատուրայի թեզի ձևաչափ	Ձևաչափ 2

5. ՀՂՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

5.1. Հղումներն իրականացվում են APA ձևաչափով (ավելի մանրամասն տես APA Manual, 6 th ed., էջ 174-179)՝ հիմնական տեքստում «հեղինակ-տարեթիվ» համակարգով և թվարկվում են այբբենական կարգով հոդվածի վերջում՝ օգտագործված գրականության ցանկում:

6. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

6.1. Հետազոտականաշխատանքը ներկայացվում է համակարգչային ձևավորման տեսքով՝ պահպանելով հետևյալ կանոնները.

- Թուղթը՝ A4 ձևաչափի,
- Տառատեսակը՝ Sylfaen,
- Տեքստի տառաչափը՝ 12,
- Գլխատառերով գրված վերնագրերը, գլուխները՝ 12, Bold,
- Միջտողային տարածությունը՝1,5 միջակայք,
- Ծավալը. **Բակալավրի ավարտական աշխատանք**՝ 30 - 35 էջ (առանց հավելվածների և գրականության ցանկի), **Մագիստրոսական թեզ**՝ 35-45 էջ (առանց հավելվածների և գրականության ցանկի):

6.2. Տեքստի ձախ կողմից լուսանցքի լայնությունը՝ 3սմ, աջ կողմից՝ 1սմ, թղթի վերևի եզրաշերտի և առաջին տողի միջև տարածությունը՝ 2.5 սմ, թղթի ներքևի եզրաշերտի և վերջին տողի միջև տարածությունը՝ 2 սմ:

6.3. Էջակալումը՝էջի ներքևի աջ անկյունում:

6.4. Ծանոթագրությունները տեղադրվում են էջի ստորին մասում, հիմնական տեքստից բաժանվում են ուղիղ գծով և համարակալվում թվերով:

6.5. Գլուխների և պարագրաֆների անվանումը տեքստում անհրաժեշտ է ընդգծել: Յուրաքանչյուր նոր գլուխ անհրաժեշտ է սկսել նոր էջից: Գլուխների և պարագրաֆների անվանման վերջում պետք չէ վերջակետ դնել:

6.6. Հավելվածները, որպես կանոն, կազմված են աղյուսակներից, սակայն կարող են ընդգրկել նաև հաշվետվության համապատասխան ձևեր, սխեմաներ և այլն:

6.7. Հավելվածներն աշխատանքին կցվում են այն հաջորդականությամբ, որը կիրառվել է տեքստում:

6.8. Հավելվածը պետք է ունենա իր անվանումը, որն արտացոլում է դրա բովանդակությունը:

7. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7.1. Հետազոտական աշխատանքի վերջնական տարբերակը ստորագրում է հեղինակը և ղեկավարը (եզրակացություններ և առաջարկություններ բաժնի վերջում)՝ նշելով ստորագրման ժամկետը:

7.2. Հետազոտականաշխատանքը ներկայացվում է թղթային (կազմված) և էլեկտրոնային (ուսանողը վերբեռնում է առցանց) տարբերակով:

7.3. Բուհի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան նախապաշտպանության և պաշտպանության համար առցանց համակարգում սահմանվում է Հետազոտական աշխատանքի և ներկայացման (PPT) վերբեռնման վերջնաժամկետ, որից հետո աշխատանք ներկայացնել ԱՆՀՆԱՐ է:

7.4. Հետազոտական աշխատանքը և ներկայացումն անհրաժեշտ է վերնագրել ըստ պահանջի՝ մինչև վերբեռնելը. ուսանողի անուն և ազգանուն - ամբիոն - կրթական աստիճան – տարի (Օրինակ՝ Petrosyan Armen - Law Department - Bachelor's research - 2014:

7.5. Մինչ աշխատանքը ներկայացնելն անհրաժեշտ է հատուկ ծրագրերի միջոցով (օրինակ՝ Armenian PowerSpell) ստուգել տառասխալները, քերականական սխալները, կետադրությունը:

8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Նախքան պաշտպանությունը ամբիոնը կազմակերպում է նախապաշտպանություն՝ նախապես սահմանված ժամկետում: Նախապաշտպանության նպատակն է օգնել ուսանողներին շտկելու վրիպակները և պատրաստվել պաշտպանությանը՝ ճիշտ կազմակերպել զեկույցը:

8.2. Հետազոտական աշխատանքի վերջնական տարբերակը (ղեկավարի կողմից հաստատված), մինչ պաշտպանության համար երաշխավորելը, ամբիոնի կողմից ներկայացվում է.

- ԵՄՀ հետազոտական Ինկուբատոր՝ գրագողության և ակադեմիական բարեվարքության այլ կանոնների համապատասխանության ստուգման համար:
- Ուղարկվում է տվյալ բնագավառի մեկ մասնագետի՝ գրախոսման համար:

8.3. Գրագողության և ակադեմիական բարեվարքության կանոնների կոպիտ խախտումների և կարճ ժամանակում շտկման անհնարինության դեպքում՝ Հետազոտական ինկուբատորն իրավասու է ներկայացնել բացասական կարծիք՝ կանխելով Հետազոտական աշխատանքի պաշտպանությունը:

8.4. Հետազոտական աշխատանքը՝ ղեկավարի հաստատման դեպքում (ղեկավարը նույնպես պիտի ստորագրի աշխատանքի համապատասխան էջում), դրական գրախոսականի և

Հետազոտական ինկուբատորի դրական կարծիքի դեպքում ներկայացվում է հրապարակային պաշտպանության:

8.5. Բացասական կարծիքի դեպքում աշխատանքը հետ է ուղարկվում:

8.6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին և անդամներին նշանակում է ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ: Ընդ որում՝ նախագահը պետք է լինի համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող հաստիքային մասնագետներից, ով ԵՄՀ աշխատող չէ և նախորդող երկու տարիների ընթացքում չի եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

8.7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ամբիոնի վարիչը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը:

8.8. Հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է ԵՄՀ աշխատակիցներ չլինեն:

8.9. Պաշտպանությունները անցկացվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Բացի հանձնաժողովի անդամներից, ցանկալի է, որ պաշտպանությանը մասնակցեն նաև գիտական ղեկավարը և գրախոսը:

8.10. Պաշտպանությունից առնվազն մեկ շաբաթ առաջ հանձնաժողովի բոլոր անդամները պետք է ստանան պաշտպանության ենթակա աշխատանքների էլեկտրոնային տարբերակները:

8.11. Ուսանողները տեղեկացվում են պաշտպանության օրվա և ժամի մասին առնվազն 10 օր առաջ

8.12. Հետազոտական աշխատանքի պաշտպանությունն ուղեկցվում է պարտադիր ցուցադրությամբ:

8.13. Հետազոտական աշխատանքի պաշտպանության ժամանակ ուսանողն առավելագույնը 15 րոպեի ընթացքում ներկայացնում է աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդները և հիմնական եզրակացություններն ու առաջարկները:

8.14. Ուսանողի ելույթից հետո հանձնաժողովի անդամների կողմից նրան տրվում են հարցեր: Ուսանողը պատասխանում է հարցերին, որից հետո հանդես են գալիս գիտական ղեկավարը և գրախոսողը (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում ընթերցվում է համապատասխան կարծիքը): Ուսանողը պարտավոր է պատասխանել գրախոսողի դիտողություններին՝ համաձայնելով դրանց հետ կամ տալով հիմնավորված բացատրություններ:

8.15. Վերջում կատարվում է աշխատանքի քննարկում, որին կարող է մասնակցել և հանդես գալ պաշտպանությանը ներկա յուրաքանչյուր անձ:

8.16. Պաշտպանությանն անհարգելի պատճառով չներկայացած ուսանողը զրկվում է այդ ուսումնական տարում այն նորից պաշտպանելու իրավունքից:

8.17. Գործընթացի գնահատման նպատակով՝ պաշտպանության ողջ ընթացքին (ներառյալ դռնփակ քննարկումներին) կարող է մասնակցել նաև Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը:



9. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9.1. Հետազոտական աշխատանքի գնահատականի 20%-ը կազմվում է գրախոսողի գնահատման արդյունքում, 80%-ը՝ հանձնաժողովի անդամների գնահատման:

9.2. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ստանում է գնահատման ռուբրիկ ուսանողների տվյալներով: Ուսանողի ելույթից հետո առավելագույնը 5 րոպեի ընթացքում ուսանողը գնահատվում է բոլոր անդամների կողմից առանձին և վերջում գնահատման թերթը ներկայացվում է քարտուղարին: Բոլոր անդամների գանահատականները մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ, հաշվարկվում է կշռված միջին գնահատականը (հանձնաժողովի նախագահ՝ 30%, մնացյալ 70%-ը հավասարապես բաշխվում է անդամների միջև), գումարվում է նաև գրախոսողի գնահատականը:

9.3. Գնահատման ընթացքում ուսանողի նախկին առաջադիմությունն ուսումնասիրել արգելվում է:

9.4. Գնահատումն իրականացվում է ըստ ստորև ներկայացված ռուբրիկների.

Գրախոսողի կողմից բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման ռուբրիկ	Ձևաչափ 3.
Գրախոսողի կողմից մագիստրոսական թեզի գնահատման ռուբրիկ	Ձևաչափ 4.
Գիտական ղեկավարի կողմից ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ձևաչափ	Ձևաչափ 5.
Հետազոտական ինկուբատորի ղեկավարի կողմից ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ձևաչափ	Ձևաչափ 6.
Հանձնաժողովի անդամների կողմից բակալավրի ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի գնահատման ռուբրիկ	Ձևաչափ 7.
Հանձնաժողովի կողմից վերջնական գնահատականի ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	Ձևաչափ 8.

9.5. Հիմք ընդունելով ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

9.6. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90%-ը:

9.7. Աշխատանքը չպաշտպանած կամ «անբավարար» ստացած կամ պաշտպանությանը չներկայացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնել (կրկնել) պաշտպանությունը հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին:

9.8. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) ենթակա է լրացուցիչ քննարկման և բողոքարկման՝ համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների.

- շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ,
- գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,
- գնահատականի լրացուցիչ քննարկման և բողոքարկման կարգը սահմանում է ԵՄՀ բողոքարկման կարգին համապատասխան:

10. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

10.1. Սարքավորումներին ներկայացվող պահանջներ.

- Կայուն ինտերնետային կապ:
- Համակարգիչ, նոութբուք, պլանշետ կամ խելացի հեռախոս (տակդիրով):
- **Բարձրախոս** (թույլատրվում է ներքին և արտաքին բարձրախոսերի և ականջակալների կիրառությունը), **խոսափող** (թույլատրվում է ներքին և արտաքին խոսափողերի և ականջակալների կիրառությունը) և տեսախցիկ (կարող են կիրառվել ներկառուցված կամ առանձին տեսախցիկներ, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է կարողանան 360 աստիճանով ցուցադրել սենյակը և սեղանի մակերեսը):

10.2. Միջավայրին ներկայացվող պահանջներ.

- **Տարածքը.** պաշտպանության ողջ ընթացքում ուսանողը սենյակում պետք է լինի միայնակ:
- **Շրջակա միջավայրը.** սեղանին և շրջակա միջավայրում չպետք է լինեն այնպիսի առարկաներ, որոնք թույլատրված չեն օգտագործել պաշտպանության ընթացքում: Ուտելիք և խմիչք (բացառությամբ ջրի) չի թույլատրվում:
- **Տեսախցիկի դիրքը.** ողջ պաշտպանության ընթացքում ուսանողի դեմքը և ձեռքերը պետք է լինեն տեսանելի: Սենյակի դուռը ևս պետք է լինի տեսանելի:

- Պաշտպանող ուսանողի մոտ արգելվում է հեռախոսի կամ այլ երկրորդ սարքավորման, խելացի ժամացույցի, գունավոր ակնոցների, տարածքում հայելիների, պայուսակի և այլնի առկայությունը:
- Պաշտպանությունը չի սկսվի այնքան ժամանակ մինչև չկատարվեն բոլոր պահանջները:

10.3. Առցանց պաշտպանության թույլատրվում են միայն այն ուսանողները, ովքեր հաջողությամբ հաջողությամբ անցել են առցանց նախապաշտպանությունը, ինչպես նաև աշխատանքը գրախոսվել է ոլորտի մեկ մասնագետի կողմից և երաշխավորվել պաշտպանության՝ գիտական ղեկավարի, ամբիոնի վարիչի և հետազոտական ինկուբատորի ղեկավարի կողմից:

10.4. Պաշտպանությունները անցկացվում են օգտագործելով Microsoft Teams կամ ZOOM էլեկտրոնային հարթակները: Հստակ ցուցումները կուղարկվեն ամբիոնի կողմից:

10.5. Ամփոփիչ ատեստավորման ընթացքը տեսաձայնագրվում և արձանագրվում է, ձայնագրությունները պահվում են արդյունքները հրապարակելուց հետո առնվազն 6 ամիս:

10.6. Պաշտպանության ողջ ընթացքում միացված են լինում հանձնաժողովի անդամների և ուսանողի խոսափողները, տեսախցիկներն ու բարձախոսները:

10.7. Բացի հանձնաժողովի անդամներից, ցանկալի է, որ պաշտպանությանը մասնակցեն նաև գիտական ղեկավարը և գրախոսը: Պաշտպանությունները բաց են նաև այն անձանց համար, ովքեր նախապես գրանցվում են:

10.8. Հանձնաժողովի անդամների կամ ամբիոնի ցանկությամբ կարող են նախատեսվել ընդմիջման ժամեր:

10.9. Նախքան պաշտպանությունը.

10.9.1. Նախապաշտպանությունը կազմակերպվում է ամբիոնի կողմից՝ օգտագործելով MS Teams հարթակը:

10.9.2. Վերջնական աշխատանքը ներկայացվում է միայն էլեկտրոնային տարբերակով՝ pdf ձևաչափով, իսկ ստորագրությունները վավերացվում են միայն եթե ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ՝

- Ուսանողն աշխատանքի վերջնական տարբերակն ուղարկում է գիտական ղեկավարին,
- Գիտական ղեկավարը ուղարկում է ամբիոնի վարիչին՝ կից գնահատմամբ,
- Ամբիոնի վարիչը հետազոտական ինկուբատորի ղեկավարին է ուղարկում այն աշխատանքները, որոնք ամբիոնի կողմից հաստատվում են,
- Հետազոտական ինկուբատորի ղեկավարը կից նամակով ուղարկում է այն աշխատանքները, որոնք երաշխավորվում են հրապարակային պաշտպանության:

10.9.3. Ղեկավարի, ամբիոնի վարիչի և Հետազոտական ինկուբատորի ղեկավարի կողմից երաշխավորված աշխատանքները ուղարկվում են գրախոսման: Գրախոսումը իրականացվում է առցանց՝ ԵՄՀ ձևաչափով, ստորագրության առկայությունը պարտադիր չէ:

10.9.4. Գրախոսության և մյուս գնահատման արդյունքները ուղարկվում են ուսանողներին պաշտպանությունից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

10.9.5. Հանձնաժողովի անդամներին ուղարկվում է վերջնական՝ պաշտպանության երաշխավորված և գրախոսված աշխատանքների էլեկտրոնային տարբերակները՝ առցանց պաշտպանությունից առնվազն մեկ շաբաթ առաջ:

10.9.6. Որակի ապահովման կենտրոնի կողմից հանձնաժողովի անդամներին և ուսանողներին է ուղարկվում առցանց պաշտպանության ԵՄՀ ընթացակարգերը և գնահատման մեխանիզմները՝ պաշտպանությունից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

10.9.7. Ամբիոնը՝ նախքան պաշտպանության մեկնարկը, պատահականության սկզբունքով ուսանողներին բաժանում է խմբերի, հերթականության ցուցակը և պաշտպանության օրվա և ժամի մանրամասները ուղարկում է ուսանողներին և հանձնաժողովի անդամներին:

10.10. Պաշտպանության ընթացքում

10.10.1. Ուսանողները պետք է հարթակում լինեն նվազագույնը 20 րոպե շուտ՝ նախքան պաշտպանության նշանակված ժամը:

10.10.2. Աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ: Ներկայացումից հետո հանձնաժողովի անդամներին ուսանողին հարցեր տալու և պատասխանների համար տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:

10.10.3. Ուսանողի ելույթից հետո հանձնաժողովի անդամները առանձին-առանձին իրականացնում են գնահատում՝ նախապես տրամադրված ձևաչափով:

10.10.4. Որևէ ուսանողի չներկայանալու դեպքում առաջնահերթությունը տրվում է ըստ ցուցակի այդ ուսանողին հաջորդողին, կամ ցուցակի մյուս ուսանողներից ցանկացողը կարող է փոխել իրեն հատկացված ժամը:

10.10.5. Նշանակված ժամին չներկայացած ուսանողը իրավունք ունի մասնակցելու պաշտպանությանը՝ մինչև վերջինիս ավարտը, այլապես պաշտպանությունը կհամարվի ձախողված և կգնահատվի 0 միավոր:

10.10.6. Պաշտպանության ընթացքում տեխնիկական կամ կապի որևէ խնդրի պատասխանատվությունը կրում է ուսանողը: Առավելագույնը 5 րոպեի ընթացքում խնդիրը չկարգավորելու դեպքում՝ ընթացակարգը շարունակվում է նախորդ կետերին համապատասխան:

10.11. Պաշտպանությունից հետո

10.11.1. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է կշռված միջին միավորով՝ ամբիոնի աշխատակցի կողմից՝ համակարգչային ծրագրի միջոցով:

10.11.2. Հետազոտական աշխատանքի գնահատականի 30%-ը կազմվում է գրախոսողի գնահատման արդյունքում, 70%-ը՝ հանձնաժողովի անդամների գնահատման (ընդ որում՝ հանձնաժողովի նախագահ՝ 30%, մնացյալ 70%-ը հավասարապես բաշխվում է անդամների միջև):

10.11.3. Պաշտպանության արդյունքները և գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ հանձնաժողովի նախագահի կողմից:

10.11.4. Ուսանողն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ:

10.11.5. Գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում:

Տիտղոսաթերթ	ԵՄՀ ձևաչափով
Բովանդակություն	Ներառում է բոլոր գլուխների և ենթագլուխների վերնագրերը
Ներածություն (2-3 էջ)	**Առաջին գլուխ** Նախաբանում անհրաժեշտ է ձևակերպել հիմնական խնդրի իմաստը, հիմնավորել թեմայի արդիականությունը, թեմայի ուսումնասիրության վիճակը, տեսական և գործնական նշանակությունը, նպատակը և խնդիրները: Նախաբանի միջոցով ընթերցողը պետք է հասկանա ընդհանուր կատարված աշխատանքը: Անհրաժեշտ է ներկայացնել նաև աշխատանքի կառուցվածքը: **Թեմայի արդիականությունը** Նախաբանում անհրաժեշտ է հստակ ներկայացնել նաև թեմայի արդիականությունը, հիմնավորել, թե ինչու է տվյալ թեման ընտրվել և որքանով է արդիական: **Հետազոտության նպատակը և խնդիրները** Նախաբանում անպայման անհրաժեշտ է ներկայացնել նաև հետազոտության նպատակը: Այն պետք է համապատասխանի հետազոտության վերնագրին և սահմանի վերջնական կանխատեսվող արդյունքը: Հետազոտության խնդիրները (3-5 խնդիր) պետք է բխեն նպատակից և այդ խնդիրների լուծման արդյունքում ապահովեն հետազոտության նպատակի իրականացումը: Հետազոտության խնդիրները սահմանելիս անհրաժեշտ է խուսափել ընդհանրական բայերից (բացատրել, մեկնաբանել և այլն), քանի որ այդ դեպքում ժվար կլինի չափել արդյունքները: Անհրաժեշտ է օգտագործել կոնկրետ և առավել չափելի բայեր, որոնք սահմանում են ոչ թե գործողությունը, այլ ակնկալվող արդյունքը. գնահատել, համեմատել, ապացուցել, բացահայտել և այլն: Նպատակի օրինակ. «Հետազոտության նպատակն է գնահատել կառավարչական նորամուծությունների ազդեցությունն ու դրանց զարգացման հնարավորություններն ընտրված ձեռնարկությունում»: Խնդիրների օրինակներ. • «Տարբեր հեղինակների ձեռներեցության հայեցակարգի վերլուծության հիման վրա ընդհանուր հատկությունների հաստատում» (տեսական) • «Սպառողների շրջանում իրականացված հարցումների հիման վրա սահմանել ձեռնարկության կառավարման հիմնական թերությունները» (կիրառական) Հետազոտությունը կարող է ուղղված լինել.

	• փաստերի բացահայտման ու մեկնաբանության, • վարկածների հաստատմանը կամ հերքմանը, • տեսական և գործնական հայացքների վերանայմանը:
Գրականության վերլուծություն (15-17 էջ)	**Երկրորդ գլուխ** Այս գլխում անհրաժեշտ է ներկայացնել հիմնախնդրի հետազոտված լինելու աստիճանը, ինչ տեսական մոտեցումներ կան հիմնախնդրին առնչվող թեմաների վերլուծություններում, հիմնախնդրի հետ կապված ինչ նախագծեր են իրականացվել, ինչ զեկույցներ են հրապարակվել: Անհրաժեշտ է վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը և իրականացված հետազոտությունները (նվազագույնը 10 գիտական աղբյուր, որից նվազագույնը երեքը՝ արդիական գիտական հոդված):
Հետազոտության իրականացման մեթոդները (1-2 էջ)	**Երրորդ գլուխ** Այս հատվածում անհրաժեշտ է հստակ ներկայացնել տեղեկատվության հավաքագրման, ինչպես նաև վիճակագրական տվյալների վերլուծության մեթոդները (**քանակական, որակական կամ խառը**): Անհրաժեշտ է մանրամասն նկարագրել կիրառված մեթոդը՝ հավելվածներում ներկայացնելով գործիքակազմը (օրինակ՝ հարցաշար և այլն): Հետազոտության **որակական** մեթոդների օրինակներ. • Խորքային հարցազրույց, • Փորձագիտական հարցում, • Խմբային հարցազրույց, ֆոկուս խմբային քննարկում, • Փաստաթղթերի վերլուծություն, • Գրականության վերլուծություն, • Դիտարկում, • Որակական տվյալների վերլուծություն և ներկայացում և այլն: Յուրաքանչյուր մասնագիտական ամբիոն կարող է տեղայնացնել պահանջը՝ ընտրելով առավել նպատակային և մասնագիտության առաձնահատկություններն արտահայտող մեթոդներ: Օրինակ. իրավագիտության ամբիոնում՝ իրավահամեմատական մեթոդ, համակարգակառուցվածքային մեթոդ և այլն: Նշված մեթոդները, ամեն դեպքում առավել խոշոր բաժանման համատեքստում են և այս դեպքում, օրինակ, համարվում են որակական մեթոդներ: **Քանակական** հետազոտության շրջանակներում հետազոտողներն իրականացնում են սահմանափակ թվով հարցումներ, այնուհետև ընդհանրացնում են այդ տվյալները ողջ հանրության համար: Քանակական մեթոդների օգնությանը հետազոտողները դիմում են այն ժամանակ, երբ խնդիր ունեն բացահայտելու հասարակական երևույթների բաշխումը, տարածվածությունը, հասարակության կարծիքը այս կամ այն խնդիր վերաբերյալ, և այլն: Այսինքն, այն դեպքերում, երբ երևույթներն անհրաժեշտ է նկարագրել թվերի ու

	տոկոսների միջոցով: Քանակական մեթոդներին նախապատվություն տալիս պետք է հիշել, որ, ի տարբերություն որակական մեթոդների, երբ բացառությունները հետաքրքիր են հետագա ուսումնասիրությունների համար, քանակականի դեպքում շեշտը դրվում է օրինաչափությունների բացահայտման վրա (Բալասանյան Ս., 2017): **Խառը** մեթոդների դեպքում համադրվում են վերոհիշյալ երկու մոտեցումները և մեթոդները: **Եթե հետազոտությունը տեսական է, ապա «Մեթոդներ» բաժինը փոխարինվում է «Տեսական հիմունքներ» բաժնով:**
Արդյունքներ վերլուծություն և քննարկում (15-20 էջ)	**Չորրորդ գլուխ** Այս գլխում ներկայացվում է հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև այդ արդյունքների մեկնաբանությունը, ներկայացվում են հետազոտության արդյունքում ստացված տվյալները:
Եզրակացություններ և առաջարկություններ (2-3 էջ)	**Հինգերորդ գլուխ** Այս գլխում անհրաժեշտ է ներկայացնել թեմայի շուրջ վարվող քաղաքականությունը, դրա դրական և բացասական կողմերը: Հետազոտության և տվյալների վերլուծության հիման վրա անհրաժեշտ է կատարել եզրահանգումներ: Գերազանց գնահատականի հավակնող ուսանողները պետք է ներկայացնեն նաև առաջարկություններ, որոնք հստակ կապակցված կլինեն առաջին գլխում սահմանված նպատակին և խնդիրներին, կնախանշեն խնդիրների լուծման հնարավորություններ: Յուրաքանչյուր առաջարկություն պետք է հիմնավորվի համապատասխան ցուցանիշներով, տրամաբանական վերլուծությամբ կամ իրականացված հետազոտության արդյունքներով: Հետազոտական աշխատանքներում անհրաժեշտ է հստակ ապահովել հետազոտության խնդիր - մեթոդ - եզրակացություն-առաջարկություններ փոխկապակցվածությունը:
Օգտագործված գրականության ցանկց (այբբենական կարգով),	Այս ցանկում գրվում են օգտագործված բոլոր աղբյուրները հետևյալ հաջորդականությամբ՝ • նորմատիվ-իրավական ակտեր և պաշտոնական նյութեր, • մենագրություններ և դասագրքեր, • գիտական հոդվածներ և մամուլ, • ինտերնետ կայքեր, • տվյալների բազաներ և այլն:
Հավելվածներ	Ներկայացվում են հետազոտության բոլոր հավելվածները՝ համարակալված:

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ՁԵՎԱՉԱՓ 2)

Տիտղոսաթերթ	ԵՄՀ ձևաչափով
Բովանդակություն	Ներառում է բոլոր գլուխների և ենթագլուխների վերնագրերը
Ներածություն (2-3 էջ)	**Առաջին գլուխ** Նախաբանում անհրաժեշտ է ձևակերպել հիմնական խնդրի իմաստը, հիմնավորել թեմայի արդիականությունը, թեմայի ուսումնասիրության վիճակը, տեսական և գործնական նշանակությունը, նպատակը և խնդիրները: Նախաբանի միջոցով ընթերցողը պետք է հասկանա ընդհանուր կատարված աշխատանքը: Անհրաժեշտ է ներկայացնել նաև աշխատանքի կառուցվածքը: **Թեմայի արդիականությունը** Նախաբանում անհրաժեշտ է հստակ ներկայացնել նաև թեմայի արդիականությունը, հիմնավորել, թե ինչու է տվյալ թեման ընտրվել և որքանով է արդիական: **Հետազոտության նպատակը և խնդիրները** Նախաբանում անպայման անհրաժեշտ է ներկայացնել նաև հետազոտության նպատակը: Այն պետք է համապատասխանի հետազոտության վերնագրին և սահմանի վերջնական կանխատեսվող արդյունքը: Հետազոտության խնդիրները (3-5 խնդիր) պետք է բխեն նպատակից և այդ խնդիրների լուծման արդյունքում ապահովեն հետազոտության նպատակի իրականացումը: Հետազոտության խնդիրները սահմանելիս անհրաժեշտ է խուսափել ընդհանրական բայերից (բացատրել, մեկնաբանել և այլն), քանի որ այդ դեպքում դժվար կլինի չափել արդյունքները: Անհրաժեշտ է օգտագործել կոնկրետ և առավել չափելի բայեր, որոնք սահմանում են ոչ թե գործողությունը, այլ ակնկալվող արդյունքը. գնահատել, համեմատել, ապացուցել, բացահայտել և այլն: Նպատակի օրինակ. «Հետազոտության նպատակն է գնահատել կառավարչական նորամուծությունների ազդեցությունն ու դրանց զարգացման հնարավորություններն ընտրված ձեռնարկությունում»: Խնդիրների օրինակներ. • «Տարբեր հեղինակների ձեռներեցության հայեցակարգի վերլուծության հիման վրա ընդհանուր հատկությունների հաստատում» (տեսական) • «Սպառողների շրջանում իրականացված հարցումների հիման վրա սահմանել ձեռնարկության կառավարման հիմնական թերությունները» (կիրառական) Հետազոտությունը կարող է ուղղված լինել.

	• փաստերի բացահայտման ու մեկնաբանության, • վարկածների հաստատմանը կամ հերքմանը, • տեսական և գործնական հայացքների վերանայմանը:
Գրականության վերլուծություն (15-17 էջ)	**Երկրորդ գլուխ** Այս գլխում անհրաժեշտ է ներկայացնել հիմնախնդրի հետազոտված լինելու աստիճանը, ինչ տեսական մոտեցումներ կան հիմնախնդրի/ դրան առնչվող թեմաների վերլուծություններում, հիմնախնդրի հետ կապված ինչ նախագծեր են իրականացվել, ինչ զեկույցներ են հրապարակվել: Անհրաժեշտ է վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը և իրականացված հետազոտությունները (նվազագույնը 15 գիտական աղբյուր, որից նվազագույնը 8՝ արդիական գիտական հոդված կամ միջազգային հաշվետվություն, ուսումնասիրություն):
Հետազոտության իրականացման մեթոդները (1-2 էջ)	**Երրորդ գլուխ** Այս հատվածում անհրաժեշտ է հստակ ներկայացնել տեղեկատվության հավաքագրման, ինչպես նաև վիճակագրական տվյալների վերլուծության մեթոդները (**քանակական, որակական կամ խառը**): Անհրաժեշտ է մանրամասն նկարագրել կիրառված մեթոդը՝ հավելվածներում ներկայացնելով գործիքակազմը (օրինակ՝ հարցաշար և այլն): Հետազոտության **որակական** մեթոդների օրինակներ. • Խորքային հարցազրույց, • Փորձագիտական հարցում, • Խմբային հարցազրույց, ֆոկուս խմբային քննարկում, • Փաստաթղթերի վերլուծություն, • Գրականության վերլուծություն, • Դիտարկում, • Որակական տվյալների վերլուծություն և ներկայացում և այլն: Յուրաքանչյուր մասնագիտական ամբիոն կարող է տեղայնացնել պահանջը՝ ընտրելով առավել նպատակային և մասնագիտության առաձնահատկություններն արտահայտող մեթոդներ: Օրինակ. իրավագիտության ամբիոնում՝ իրավահամեմատական մեթոդ, համակարգակառուցվածքային մեթոդ և այլն: Նշված մեթոդները, ամեն դեպքում առավել խոշոր բաժանման համատեքստում են և այս դեպքում, օրինակ, համարվում են որակական մեթոդներ: **Քանակական** հետազոտության շրջանակներում հետազոտողներն իրականացնում են սահմանափակ թվով հարցումներ, այնուհետև ընդհանրացնում են այդ տվյալները ողջ հանրության համար: Քանակական մեթոդների օգնությանը հետազոտողները դիմում են այն ժամանակ, երբ խնդիր ունեն բացահայտելու հասարակական երևույթների բաշխումը, տարածվածությունը, հասարակության կարծիքը այս կամ այն խնդիր վերաբերյալ, և այլն: Այսինքն, այն

	դեպքերում, երբ երևույթները անհրաժեշտ է նկարագրել թվերի ու տոկոսների միջոցով: Քանակական մեթոդներին նախապատվություն տալիս պետք է հիշել, որ, ի տարբերություն որակական մեթոդների, երբ բացառությունները հետաքրքիր են հետագա ուսումնասիրությունների համար, քանակականի դեպքում շեշտը դրվում է օրինաչափությունների բացահայտման վրա (Բալասանյան Ս., 2017): **Խառը** մեթոդների դեպքում համադրվում են վերոհիշյալ երկու մոտեցումները և մեթոդները: **Եթե հետազոտությունը տեսական է, ապա «Մեթոդներ» բաժինը փոխարինվում է «Տեսական հիմունքներ» բաժնով:**
Արդյունքներ վերլուծություն և քննարկում (15-20 էջ)	**Չորրորդ գլուխ** Այս գլխում ներկայացվում է հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև այդ արդյունքների մեկնաբանությունը, ներկայացվում են հետազոտության արդյունքում ստացված տվյալները: Այս հատվածում ուսանողը պետք է ներկայացնի մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և/կամ որակական տվյալները՝ որոշումներ կայացնելու նպատակով և առաջարկություններ կատարելու նպատակով խորը վերլուծություն:
Եզրակացություններ և առաջարկություններ (2-3 էջ)	**Հինգերորդ գլուխ** Հինգերորդ գլխում անհրաժեշտ է ներկայացնել թեմայի շուրջ վարվող քաղաքականությունը, դրա դրական և բացասական կողմերը, արվեն առաջարկություններ հիմնախնդիրների լուծման վերաբերյալ (հակառակ դեպքում ուսանողը չի կարող հաղթահարել գնահատականի դրական շեմը): Յուրաքանչյուր առաջարկություն պետք է հիմնավորվի համապատասխան ցուցանիշներով, տրամաբանական վերլուծությամբ կամ իրականացված հետազոտության արդյունքներով: Ինչպես վերլուծությունը, այնպես էլ հետևությունների ու առաջարկությունների մշակումը պետք է կատարվի բազմակողմ, ներկայացնի թեմայի վերաբերյալ խորը մասնագիտացված գիտելիքներ՝ վերջին ձեռքբերումների ուսումնասիրության հիման վրա: Անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության թեմայի վերաբերյալ միջմասնագիտական ոլորտների վերլուծության հիման վրա հստակ առաջարկություններ: Հետազոտության և տվյալների վերլուծության հիման վրա անհրաժեշտ է կատարել եզրահանգումներ և ներկայացնել առաջարկություններ, որոնք հստակ կապակցված կլինեն առաջին գլխում սահմանված նպատակին և խնդիրներին, կնախանշեն խնդիրների լուծման հնարավորություններ: Դրական գանահատվելու համար

	անհրաժեշտ է առնվազն երկու առաջարկության կապակցումը նպատակին և խնդիրներին։ Հետազոտական աշխատանքներում անհրաժեշտ է հստակ ապահովել հետազոտության խնդիր - մեթոդ - եզրակացություն-առաջարկություններ փոխկապակցվածությունը: Գերազանց գնահատականի կարող են հավակնել միայն մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները հետազոտելու, արդիական գաղափարներ ու մոտեցումներ առաջադրելու, ինչպես նաև ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված նորարարական ու ստեղծագործալուծումներ առաջարկելու համար հմտություններ ցուցաբերած ուսանողները:
Օգտագործված գրականության ցանկը (այբբենական կարգով),	Այս ցանկում գրվում են օգտագործված բոլոր աղբյուրները հետևյալ հաջորդականությամբ՝ • նորմատիվ-իրավական ակտեր և պաշտոնական նյութեր, • մենագրություններ և դասագրքեր, • գիտական հոդվածներ և մամուլ, • ինտերնետ կայքեր, • տվյալների բազաներ և այլն։
Հավելվածներ	Ներկայացվում են հետազոտության բոլոր հավելվածները՝ համարակալված։

ԳՐԱԽՈՍՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ (ՁԵՎԱՉԱՓ 3)

Ուսումնական տարի՝
Ամբիոն՝
Կրթական ծրագրի անվանում՝
Թեմայի անվանում՝
Ուսանողի անուն, ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Չափորոշիչներ	Միավոր	Նկատառումներ/ Դիտողություններ
1. Աշխատանքի արդիակա-նության հիմնավորում **/30%/**	1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, հիմնախնդիրը հստակ ձևակերպված է *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	1.2. Հստակ ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	1.3. Իրականացված է թեմայի վերաբերյալ գիտական գրականության և հետազոտությունների վերլուծություն (նվազագույնը 10 գիտական աղբյուր, որից նվազագույնը երեքը՝ արդիական գիտական հոդված) *Առավելագույնը՝ 10 միավոր*		
2. Հետազոտության իրակա-նացման մեթոդներ **/20%/**	2.1. Մանրամասն նկարագրված են հետազոտության իրականացման համար կիրառված մեթոդ(ներ)ը և դրան(ց) համապատասխան գործիքակազմը *Առավելագույնը՝ 20 միավոր*		
3. Արդյունքների վերլուծութ-յուն, քննարկում և եզրակացություններ **/30%/**	3.1. Ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները և ստացված տվյալները, կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	3.2. Եզրակացությունները (նաև առաջարկությունները) հիմնավորված են համապատասխան ցուցանիշներով,		

	տրամաբանական վերլուծությամբ կամ իրականացված հետազոտության արդյունքներով *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	3.3. Ապահովված է հետազոտության խնդիր - մեթոդ - եզրակացություն - առաջարկություն փոխկապակցվածությունը *Առավելագույնը՝ 10 միավոր*		
4. Աշխատանքի շարադրում և ձևավորում **/20%/**	4.1. Աշխատանքը շարադրված է գրագետ, ունի տրամաբանված կառուցվածք և ձևավորված է ըստ ԵՄՀ տեխնիկական պահանջների *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	4.2. Հղումներն իրականացված են APA ձևաչափով և արտացոլված են օգտագործված գրականության ցանկում *Առավելագույնը՝ 10 միավոր*		
Ընդհանուր միավորներ[1] /Առավելագույնը՝ 100 միավոր/			
Ընդհանուր դիտողություններ, նկատառումներ և առաջարկություններ			

Գրախոսի անուն, ազգանուն՝
Գրախոսի աշխատանքի վայր, պաշտոն՝
Գրախոսի գիտական աստիճան, կոչում (առկայության դեպքում)՝
Գրախոսի ստորագրություն
Ամսաթիվ

[1] Ներկայացվում է միավորների հանրագումարը

ԳՐԱԽՈՍՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ (ՁԵՎԱՉԱՓ 4)

Ուսումնական տարի՝
Ամբիոն՝
Կրթական ծրագրի անվանում՝
Թեմայի անվանում՝
Ուսանողի անուն, ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Չափորոշիչներ	Միավոր	Նկատառումներ/ Դիտողություններ
1. Աշխատանքի արդիակա-նության հիմնավորում **/30%/**	1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, հիմնախնդիրը հստակ ձևակերպված է *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	1.2. Հստակ ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	1.3. Իրականացված է թեմայի վերաբերյալ գիտական գրականության և հետազոտությունների վերլուծություն (նվազագույնը 15 գիտական աղբյուր, որից նվազագույնը 8-ը՝ արդիական գիտական հոդված) *Առավելագույնը՝ 10 միավոր*		
2. Հետազոտության իրակա-նացման մեթոդներ **/20%/**	2.1. Մանրամասն նկարագրված են հետազոտության իրականացման համար կիրառված մեթոդ(ներ)ը և դրան(ց) համապատասխան գործիքակազմը *Առավելագույնը՝ 20 միավոր*		
3. Արդյունքների վերլուծութ-յուն, քննարկում և եզրակացություններ **/30%/**	3.1. Ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները և ստացված տվյալները, կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն *Առավելագույնը՝ 10 միավոր*		

	3.2. Եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված են համապատասխան ցուցանիշներով, տրամաբանական վերլուծությամբ կամ իրականացված հետազոտության արդյունքներով *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	3.3. Ապահովված է հետազոտության խնդիր - մեթոդ - եզրակացություն - առաջարկություն փոխկապակցվածությունը *Առավելագույնը՝ 10 միավոր*		
4. Աշխատանքի շարադրում և ձևավորում **/20%/**	4.1. Աշխատանքը շարադրված է գրագետ, ունի տրամաբանված կառուցվածք և ձևավորված է ըստ ԵՄՀ տեխնիկական պահանջների *Առավելագույնը՝ 10 միավոր*		
	4.2. Հղումներն իրականացված են APA ձևաչափով և արտացոլված են օգտագործված գրականության ցանկում *Առավելագույնը՝ 10 միավոր*		
Ընդհանուր միավորներ[2] /Առավելագույնը՝ 100 միավոր/			
Ընդհանուր դիտողություններ, նկատառումներ և առաջարկություններ			

Գրախոսի անուն, ազգանուն՝
Գրախոսի աշխատանքի վայր, պաշտոն՝
Գրախոսի գիտական աստիճան, կոչում՝
Գրախոսի ստորագրություն
Ամսաթիվ

[2] Ներկայացվում է միավորների հանրագումարը

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ (ՁԵՎԱՉԱՓ 5)

Ուսումնական տարի՝
Կրթական աստիճան՝
Ամբիոն՝
Կրթական ծրագրի անվանում՝
Թեմայի անվանում՝
Ուսանողի անուն, ազգանուն՝

1. Հետազոտության արդիականություն, նպատակ և մեթոդաբանություն
2. Հետազոտության իրականացում և արդյունքների վերլուծություն
3. Աշխատանքի կառուցվածք (շարադրում և ձևավորում)
4. Ընդհանուր դիտողություններ, նկատառումներ և առաջարկություններ

Եզրակացություն՝

☐ Աշխատանքը **բավարարում է** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

☐ Աշխատանքը **մասնակիորեն բավարարում է** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

☐ Աշխատանքը **չի բավարարում** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

Գիտական ղեկավարի անուն ազգանուն՝
Գիտական ղեկավարի գիտական աստիճան, կոչում (առկայության դեպքում)՝

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ (ՁԵՎԱՉԱՓ 6)

Ուսումնական տարի՝
Կրթական աստիճան՝
Ամբիոն՝
Կրթական ծրագրի անվանում՝
Թեմայի անվանում՝
Ուսանողի անուն, ազգանուն՝

1. Հետազոտության արդիականություն, նպատակ և մեթոդաբանություն
2. Հետազոտության իրականացում և արդյունքների վերլուծություն
3. Աշխատանքի կառուցվածք (շարադրում և ձևավորում)
4. Ընդհանուր դիտողություններ, նկատառումներ և առաջարկություններ

Եզրակացություն՝

☐ Աշխատանքը **բավարարում է** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

☐ Աշխատանքը **մասնակիորեն բավարարում է** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

☐ Աշխատանքը **չի բավարարում** ԵՄՀ կողմից ներկայացվող պահանջներին

Հետազոտական ինկուբատորի ղեկավար՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ (ՁԵՎԱՉԱՓ 7)

/լրացվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից/

Ուսումնական տարի՝_____ Ամբիոն _____ Կրթական ծրագիր _____ Անցկացման օրը _____

Հ/Հ	Ուսանողի անուն, ազգանուն[3]	Ներկայացման հմտություններ /20%/	Ներկայացվող նյութի բովանդակություն /հետազոտության խնդիր - մեթոդ - եզրակացություն - առաջարկություն կապ/ /50%/	Հարցերին պատասխանելու կարողություն /30%/	Ամփոփ գնահատական */Առավելագույնը 100 միավոր/*

Հանձնաժողովի անդամի անուն, ազգանուն _____ Ստորագրություն_____

[3] Ուսանողների անունները նախապես մուտքագրվում են ամբիոնի մեթոդիստի կողմից

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ (ՁԵՎԱՉԱՓ 8)

Հանձնաժողովի կողմից վերջնական գնահատականի ԱՄՓՈՓԱԹԵՐԹ[4]

Ուսումնական տարի՝_____ Ամբիոն _____ Պաշտպանության անցկացման օրը_____

Հ/Հ	Ուսանողի անուն, ազգանուն[5]	Գրախոսի գնահատական /20%/	Հանձնաժողովի գնահատական /70%/		Ամփոփ գնահատական /Առավելագույնը 100 միավոր/
			Հանձնաժողովի նախագահ /30%/	Հանձնաժողովի անդամներ /70%/	

Հանձնաժողովի նախագահ անուն, ազգանուն _____ Ստորագրություն_____

[4] Լրացվում է ամբիոնի աշխատակցի կողմից՝ անկախ գնահատումներից կշռված միջին միավոր դուրս բերելու միջոցով

[5] Ուսանողների անունները նախապես մուտքագրվում են ամբիոնի աշխատակցի կողմից